

ՊԱՇՏՈՆԱԿԱՆՔ



Հինգշաբթի, 12 Օգոստոս.- Իսրայելի ԱԳՆ Կրօնից վարչութեան նորանշանակ պետ Տիկ. Շուլի Դաւիդովիչ եւ նոյն վարչութեան քարիստոնէաներու բաժնի նորանշանակ պետ Տիկ. Տանիա Պերկ-Ռաֆայէլ՝ ընկերակցութեամբ վարչութեան գլխաւոր քարտուղարի եւ Ներքին Գործոց նախարարութեան քրիստոնեաներու բաժնի պետ Տիար Սեզար Մարժիէի այցելեցին Պատրիարքարան եւ հանդիպում ունեցան Ամենապատիւ Տ. Նուրհան Պատրիարք Մանուկեանի հետ:

Երեքշաբթի, 2 Նոյեմբեր.- Երուսաղէմի Դըպտոց եպիսկոպոս Գերշ. Տ. Անտոնիոս Արքեպիսկոպոս այցելեց Պատրիարքարան եւ հանդիպում ունեցաւ Սուրբ Աթոռոյս Գահակալ՝ Ամենապատիւ Տ. Նուրհան Պատրիարք Մանուկեանի հետ:

Հանդիպման ընթացքին քննարկուեցան Սուրբ Տեղեաց վերաբերող հարցեր:

Ուրբաթ, 5 Նոյեմբեր.- Իսրայելի «Ազգային Անվտանգութեան» քոլէճի տարբեր ազգերու ուսանողներ այցելեցին Պատրիարքարան եւ հանդիպում ունեցան Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հօր հետ: Հանդիպումէն ետք ճանաչողական այց կատարեցին նաեւ դէպի Հայոց թաղ:

Չորեքշաբթի, 15 Դեկտեմբեր.- Իսրայելի մէջ Ռուսիոյ դեսպանատան նորանշանակ առաջին քարտուղար Տիար Տիգրան Կոտպաշեան այցելեց Պատրիարքարան եւ հանդիպում ունեցաւ Ամենապատիւ Տ. Նուրհան Պատրիարք Մանուկեանի հետ:

Հանդիպմանը ներկայ էր նաեւ Իսրայելի մէջ Հայաստանի Հանրապետութեան հիւպատոս՝ Տիար Նարեկ Դազարեան:

Ուրբաթ, 17 Դեկտեմբեր.- Երուսաղէմի մէջ Սպանիոյ նորանշանակ Ընդհանուր Հիւպատոս Տիար Ալֆոնսո Լուչինի Մաթէո այցելեց Պատրիարքա-

րան եւ հանդիպում ունեցաւ Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հօր հետ: Հանդիպումէն ետք Տիար Լուչինի այցելեց Սրբոց Յակոբեանց Մայր տաճար, ապա շրջայց կատարեց վանքէն ներս:

Երկուշաբթի, 27 Դեկտեմբեր.- Կաթոլիկ եւ Բողոքական եկեղեցիներու Ս. Ծննդեան տօնի առիթով, Երուսաղէմի մէջ սկսան շնորհաւորութիւնները:

Սրբոց Յակոբեանց Միաբանութիւնը, հանդիսապետութեամբ Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հօր, շնորհաւորելու գնաց Ս. Երկրի Քիւսթոս՝ Հ. Ֆրանչեսկո Փաթոնի եւ Ֆրանչիսկեան Միաբանութեան:

Երեքշաբթի, 28 Դեկտեմբեր.- Ամանորի եւ Ս. Ծննդեան տօներու առիթով Երուսաղէմի քաղաքապետ՝ Տիար Մոշէ Լիոնի կողմէ կազմակերպուած քրիստոնեայ համայնքներու հետ հանդիպմանը ներկայ գտնուեցաւ Ս. Աթոռոյս Լուսարարապետ Տ. Սեւան Արք. Դարիպեան, ընկերակցութեամբ Աւագ Թարգման Տ. Վազգէն Աբղ. Ալէքեանի:

Չորեքշաբթի, 29 Դեկտեմբեր.- Սրբոց Յակոբեանց Միաբանութիւնը, հանդիսապետութեամբ Ամենապատիւ Պատրիարք Սրբազան Հօր, շնորհաւորելու գնաց Լատինաց Պատրիարք Ամեն. Տ. Փիերպատիսթա Արքեպիսկոպոս Փիցապալային եւ Միաբանութեան:

Նոյն օրը երեկոյեան, Ամանորի եւ Ս. Ծննդեան տօներու առիթով Իսրայելի նախագահ Վսեմաշուք Տիար Իցիսակ Հերցոկի կողմէ կազմակերպուած ընդունելութեան Ս. Աթոռոյս կողմէ ներկայ գտնուեցաւ Լուսարարապետ Տ. Սեւան Արք. Դարիպեան, ընկերակցութեամբ Դիւանապետ՝ Տ. Կորին Վրդ. Բաղդասարեանի եւ Աւագ Թարգման՝ Տ. Վազգէն Աբղ. Ալէքեանի:

Պատրաստեց՝ ՆԵՐՍԵՍ ԱՔԴ. ԱԼՈՅԵԱՆ